

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ում (2000-2010 թթ.)
Առուստամյան Ա. (ԱրՊՀ, ԼՂՀ)
armine.arustamyan@mail.ru

Բանալի բառեր՝ վերաբնակեցում, ժողովրդագրական
իրավիճակ, միգրացիա, գաղթ, բնակեցում, փախստական:

1994 թ. հրադարձարից հետո ԼՂՀ իշխանություններն ակտիվորեն
ձեռնամուխ եղան վերաբնակեցման խնդրի իրագործմանը: 1994 թ.-
ից ի վեր Արցախի կառավարությունն իրականացնում է «Վերադարձ
Արցախ» ծրագիրը: Նպատակն էր՝ վերաբնակեցնել և վերականգնել
պատերազմական գործողությունների հետևանքով ամայացած
Արցախի տարածքները: Աշխատանքը տարվում էր երկու
ուղղությամբ՝ նորաստեղծ գյուղերի բնակեցում և գյուղերի
հզորացում: ԼՂՀ կառավարության որոշմամբ 2001թ. նոյեմբերի 30-ին
կառավարությանն առընթեր ստեղծվում է Միգրացիայի,
փախստականների և վերաբնակեցման վարչություն: 2001 թ.
կառավարությունը հաստատեց ԼՂՀ վերաբնակեցման տասնամյա
ծրագիրը, որով նախատեսվում էր այդ տարիներին երկրում ընդունել
մինչև 67000 գաղթականի: Վերաբնակեցման քաղաքականությանը
նպաստում էր նաև ԼՂՀ-ում 1997 թ. մշակված ծնելիության և
բազմազավակության խթանման ծրագիրը:

1993 թ.-ից մինչև 2004 թ.-ը Լեռնային Ղարաբաղ է տեղափոխվել
7243 ընտանիք՝ թվով 18593 մարդ, որոնց մի մասը բնակություն է
հաստատել մայրաքաղաքում, մյուսները՝ շրջկենտրոններում:

ԼՂՀ կառավարության 2003 թ. ապրիլի 15-ի թիվ 121 որոշմամբ
վերաբնակներին տրվում են նոր արտոնություններ. անհատական
տնով կամ բնակարանով ապահովում, միանվագ դրամական
օգնության ցուցաբերում, ՀՀ-ից ԼՂՀ ճանապարհաճախսի վճարում,
ընտանիքի գույքի տեղափոխում կամ գույքի տեղափոխման
դրամական փոխհատուցում, ՀՀ-ից ԼՂՀ երկարաժամկետ արտոնյալ

բյուջետային վարկի տրամադրում՝ 260 հազար դրամի չափով, մշտական օգտագործման իրավունքով հողի հատկացում, 5 տարի ժամկետով բնակարանային կոմունալ ծառայությունների վարձից ազատում, նոր ընտանիք կազմած գորակոչային տարիքի անձանց ժամկետային զինվորական ծառայության երկու տարով հետաձգում, վերաբնակիչների ընդգրկում վերաբնակեցման ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքներում:

2003 թ. ապրիլի 15-ի՝ ԼՂՀ տարածքում վերաբնակվող ընտանիքներին տրամադրվող արտոնությունների մասին թիվ 121 որոշմամբ վերաբնակեցման քաղաքականությունը դրվեց նոր հիմքերի վրա: 2004 թ. հանրապետությունում վերաբնակեցվել է 195 ընտանիք՝ 801 շնչով: 2005 թ. ԼՂՀ-ում վերաբնակեցվել է 127 ընտանիք, 100-ից ավելին հանրապետության շրջաններում, մասնավորապես՝ Շահումյանի, Մարտակերտի և Ասկերանի: 2006 թ. ՀՀ-ից և այլ երկրներից վերաբնակեցվել է 155 ընտանիք՝ 487 անձի ընդգրկմամբ: 2007 թ. ՀՀ-ից և ԱՊՀ այլ երկրներից ԼՂՀ վերադարձան 87 ընտանիք՝ 284 շնչով: 2008 թ. հանրապետության շրջաններում վերաբնակեցվեց 172 ընտանիք՝ 567 շնչով, որոնցից 88 ընտանիք, կամ 329-ը՝ Քաշաթաղում: 2010 թ. ԼՂՀ է վերադարձել է 130 ընտանիք:

ԼՂՀ բնակավայրեր ներգաղթող բնակչությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝ գաղթողներ այլ երկրներից և ԱՊՀ երկրներից, Հայաստանի Հանրապետությունից և ներքին գաղթողներ: Ստեփանակերտում վերաբնակների հիմնական մասը կազմում են ներքին գաղթողները՝ 62,64 տոկոս, իսկ Հայաստանից գաղթողները՝ 25,85 տոկոս. նրանք հիմնականում փախստականներ են կամ սոցիալական որոշ պատճառներով բնակության մշտական վայրը լքած անձինք: Երկու դեպքում էլ ներգաղթողների մեծ մասը՝ մոտ 88,50 տոկոսը, գերադասում է բնակություն հաստատել մայրաքաղաքում: Ներքին ներգաղթողները կազմում են նրանց ընդհանուր թվի 91,74 տոկոսը, իսկ ԱՊՀ երկրներից ներգաղթողները՝ 11,49 տոկոս: Այս հենքի վրա

մայրաքաղաքի բնակչության աճը տագնապ է առաջացնում. չէ որ ներգաղթը պայմանավորված չէ աշխատուժի պահանջարկի աճով՝ կապված նոր աշխատատեղերի բացման հետ, այլ հակառակը՝ խորացնում է բնակչության զբաղվածության՝ առանց այն էլ ցածր մակարդակը:

Արցախի զարգացման ու հզորացման հիմնախնդիրների լուծումը ենթադրում է նրանում ժողովրդագրական իրավիճակի կտրուկ փոփոխություն, վերաբնակեցման հիմնավորված քաղաքականության իրականացում: Վերաբնակեցումն այն կարևոր ուղղավարական խնդիրն է, որի ճիշտ և արդյունավետ իրականացման դեպքում հնարավոր է խթանել ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացումը, լուծել ԼՂՀ թերբնակեցված շրջանների բնակեցման խնդիրը:

THE DEMOGRAPHIC SITUATION AND CONGESTION POLITICS IN NKR (2000-2010)

Arustamyan A. (Artsakh State University, Nagorno Karabakh Republic)